



# ԼՐԱՏՈՒ N° 1

## Հոկտեմբեր, 2013թ.

“Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդիսանում է “Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես որոշիչ գործոն Սևծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար” (*Black Sea LRED-Net*) ծրագրի համակարգող:

Ծրագրին որպես գործընկեր մասնակցում են նաև Հունաստանի, Բուլղարիայի, Մոլդովայի և Վրաստանի գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունները, ինչպես նաև Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը:

Ծրագիրը մեկնարկել է 2013թ. հուլիսին, ծրագրի ընդհանուր տևողությունը 24 ամիս է:

**Ծրագրի համընդհանուր նպատակն է** ծրագրի մասնակից երկրների տեղական/ տարածաշրջանային տնտեսական զարգացման հիմնական դերակատարների ձեռնարկատիրական և ադմինիստրատիվ կարողությունների զարգացումը՝ տեղական մակարդակում, ինչպես նաև գործընկեր երկրների միջև սոցիալական, տեղեկատվական, առևտրային կապերի զարգացման նպատակով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել մասնակից երկրների տեղական տնտեսական զարգացման (SSՁ) նախաձեռնությունները, առկա ծրագրերն ու գործիքները, ապահովել փորձի և գիտելիքների փոխանակում SSՁ ծրագրերի վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում կբացահայտվեն նաև ծրագրի մասնակից համայնքների/տարածաշրջանների մրցակցային առավելությունները և կմշակվեն արժեքային շղթաներ մասնակից երկրների միջև: Առևտրային կապերի զարգացման նպատակով աջակցություն կցուցաբերվի գործարար կապերի և անդրսահմանային համագործակցության հաստատման գործում:

Ծրագրի շրջանակներում 2013թ-ի սեպտեմբերի 22-28-ը Երևանում կայացել է “Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում” (հայտնի է PACA հապավումով) ուսուցանողների վերապատրաստման դասընթացը, որը վարում էր միջազգային փորձագետ Ֆրանկ Վելթրինգը: Յուրաքանչյուր գործընկեր կազմակերպությունից դասընթացին մասնակցեցին առնվազն 2-ական ներկայացուցիչ, որոնց ընդհանուր թիվը հասավ 14-ի:

Այնուհետև սույն ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 30-ին Երևանում տեղի ունեցավ առաջին մամուլի ասուլիսը, որին հաջորդեց 2-օրյա համակարգողների հանդիպումը՝ բոլոր գործընկեր կազմակերպությունների համակարգողների մասնակցությամբ:



Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել ձեռնարկ, որը հնարավորություն կտա ծրագրում ընդգրկված գործընկերներին իրենց երկրներում կազմակերպել նմանատիպ դասընթացներ:

